

Արցախի մասին ութ հետազոտական ծրագիրներ նպաստ կը ստանան
Գալուստ Կիլպենկեան Հիմնարկության կողմէ

Գալուստ Կիլպենկեան Հիմնարկության Հայկական Բաժանմունքը մեկնարկեց կրթաթոշակներու նոր ծրագիր մը Յունուար 2021-ին, որ կը կեդրոնանայ Արցախի մասին հետազոտական աշխատանքներու վրայ: Այս նախաձեռնութիւնը մաս կը կազմէ Բաժանմունքին «Հայագիտութեան կարճաժամկետ կրթաթոշակ»-ի ծրագիրին, եւ կը նպատակադրէ քաջալերել Արցախի վերաբերեալ ժամանակակից ուսումնասիրութիւնները, յատուկ ուշադրութիւն դարձնելով յետ-1994-եան ժամանակաշրջանին, ինչպէս նաեւ առկայ կացութեան:

Դիմումներու առաջին փուլին (Մարտ 1-էն Ապրիլ 20), չորս տարբեր երկիրներէ դիմումներ կատարուեցան. Հայաստան, Ֆրանսա, Լիբանան եւ Միացեալ Նահանգներ: Այս փուլին, ութ դիմողներ կրթաթոշակ ստացան, հաշիւի առնելով դիմումներուն որակը եւ ուսումնասիրութեան առարկաներուն այժմեականութիւնը: Նիւթերն են՝ արտաքին քաղաքականութիւն եւ ապահովութիւն, միջազգային օրէնք, մշակութային ինքնութիւն, սեռային ներառականութիւն, խաղաղութեան հաստատում, սնունդի ապահովութիւն, ինչպէս նաեւ բնապահպանական հարցեր:

Կրթաթոշակներուն ընդհանուր գումարը 30,000 եւրօ է, որ յատկացուեցաւ հետեւեալ դիմողներուն.

- Ատրինէ Գրիգորեան (ԱՄՆ)
- Դկտ. Ալբերթ Հայրապետեան (Հայաստան)
- Արմէն Ասրեան (Հայաստան)
- Դկտ. Քարոլ Ման (Ֆրանսա)
- Ղարիպ Յարութիւնեան (Հայաստան)
- Դկտ. Իկոռ Տորֆման-Լազարեւ (Ֆրանսա)
- Դկտ. Ռուբէն Էլամիրեան (Հայաստան)
- Դկտ. Թալին Փափազեան (Ֆրանսա)

Կը շնորհաւորենք բոլոր նպաստառուները, եւ մեծ հետաքրքրութեամբ կը սպասենք այլազան ուսումնասիրութիւններուն արդիւնքներուն:

Արցախի մասին հետազոտական կրթաթոշակներու այս ծրագիրը պիտի ունենայ դիմելու երկրորդ փուլ մը՝ Յուլիս 1-էն մինչեւ 31 Օգոստոս 2021:

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել ծրագիրին էջը՝
<https://gulbenkian.pt/en/bolsas-lista/short-term-research-grants-for-the-study-of-nagorno-karabakh-ii/>